Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

ԹԵՄԱ՝	ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՑԻՉ՝	ԾՈՎԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ
ԽՈՒՄԲ՝	ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝	ԼԻԼԻԹ ՄԱՐԿՈՍՅԱՆ

2 0 2 2 թ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

ԳԼՈՒԽ 1. ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ……4

ԳԼՈՒԽ 2. ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԵՐԸ……6

2.1. Հմայություններ և աղոթքներ ……..…...6

2.2. Առասպելներ և վիպերգեր ……6

2.3. Հեքիաթներ …….... 9

2.4. Առակներ ……...10

2.5. Դյուցազներգություն ……...11

2.6. Առածներ և ասացվածքներ ……13

2.7. Հանելուկներ ……15

2.8. Քնարական ստեղծագործություններ …….....15

2.8.1. Աշխատանքային երգեր ……15

2.8.2. Սիրո երգեր ……..……..16

2.8.3. Պանդխտության երգեր ……..……17

2.8.4. Կենցաղային, ծիսական քնարերգություն ..…….....17

2.8.5. Օրորոցի երգեր ..……...18

2.8.6. Վիճակի երգեր……18

2.8.7. Սգո երգեր ..……19

2.9. Բնության երգեր ..……19

2.10. Կատակերգեր և երգիծական երգեր ……..……20

2.11. Անեկդոտներ ..……..20

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ……21

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ……..22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդական բանահյուսությունը աշխարհի ամենահարուստ բանավոր ստեղծագործություններից մեկն է: Նրա հեղինակը հայ ժողովուրդն է: Այն կոլեկտիվ բանականության և կոլեկտիվ հույզերի արդյունք է ու կենդանի և առավել խորն ու ամբողջական է ներկայացնում հայ ժողովրդին, նրա պատմական զարգացման ընթացքը, պետականության կազմավորումը, ազատագրական պայքարը, հաղթանակը, երևակայությունը, բնավորության հիմնական գծերը, ազատասիրական իղձերը, ձգտումը դեպի գեղեցիկը, լույսը, գիտությունը:

Բանահյուսությունը կարևոր տեղ ունի ուսուցման համակարգում: Սովորողները միշտ էլ սիրով են կարդում այդ նյութերը, որոնք մեծ նշանակություն ունեն ոչ միայն հայ ժողովրդի մտածողությունն ու գեղարվեստական ըմբռնումները, այլև նրանց պատմությունն ուսումնասիրելու համար:

Բանահյուսական նյութերի միջոցով կարող ենք իմանալ, թե ինչպես է ապրել հայ մարդը, ինչպիսի կենցաղով, ինչպես է աշխատել, ուրախացել, ծիծաղել, վշտացել, ինչից է վախեցել, ում և ինչի դեմ է պայքարել, ինչ երազել, ինչին է ձգտել:

Բանահյուսությունը հայ ժողովրդի յուրօրինակ տարեգրությունն է:

Առաջին գլխում համառոտ ներկայացվելու է բանահյուսության և գրականության միջև եզած կապն ու տարբերությունները:

Երկրորդ գլխում ներկայացվելու են բանահյուսության հիմնական ժանրերը և նրանց նմուշները:

ԳԼՈՒԽ 1. ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդական բանահյուսությունը նույնքան հին է, որքան հայ ժողովուրդը: Նրանում իր արտացոլումն է գտել ժողովրդի ողջ կյանքը՝ աշխատանքը, պայքարը, ապրելակերպը: Ժողովրդական բանահյուսության մեջ մարմնավորվում է ժողովրդի ըմբոստ, միշտ վեր խոյացող ոգին, արտահայտվում են նրա վեհ գաղափարներն ու ազնիվ ձգտումները, անմահանում նրա քաջարի զավակների հերոսական կերպարները:

Այս ամենի շնորհիվ բանահյուսությունը մեծ դեր է կատարում սերունդների դաստիարակության գործում, նրանց տոգորում հայրենասիրական և մարդասիրական վեհ գաղափարներով, օժտում մարդկային լավագույն հատկություններով: Բանահյուսությունը նաև առատ նյութ է ժողովրդի պատմությունն ուսումնասիրելու համար: Այն գրողների ոգևորության ու ստեղծագործության անսպառ աղբյուր է:

Բանավոր ստեղծագործությունները ունեն հարուստ բովանդակություն, կուռ կառուցվածք, հետաքրքրաշարժ հյուսվածք, կերպարներ, ճոխ բառագանձ, խոսքի պատկերավորման և արտահայտչական բազմազան միջոցներ:

Ստեղծվելով ժողովրդի կողմից՝ ժողովրդական բանահյուսությունը բանավոր կերպով փոխանցվում է սերնդից սերունդ: Ժամանակի ընթացքում ենթարկվում է բազմազան փոփոխությունների. երբեմն ընդարձակվում է, հարստանում ու ճոխանում, երբեմն էլ սեղմվում է, նույնիսկ՝ անհետանում, առաջանում են նորերը՝ կյանքի զարգացմանը զուգընթաց:

Հայ բանահյուսությունը սերտորեն կապված է հասարակական կյանքի զարգացման հետ և անցել է այնպիսի շրջաններ, ինչպիսին անցել է հասարակությունը:

Բանահյուսությունը հիմքն է գեղարվեստական գրականության: Գրականությունը բանահյուսության գրավոր և հեղինակային շարունակությունն է: Բանահյուսությունը նաև ազգային գիտության ու մշակույթի հիմքն է:

Բանահյուսությունը տարբերվում է գեղարվեստական գրականությունից նրանով, որ այն բանավոր և կոլեկտիվ ստեղծագործության արդյունք է: Կոլեկտիվ ստեղծագործություն ասելով՝ հասկանում ենք, որ այս կամ այն գործը ստեղծողի անունը չի նշվում, և այն վերագրվում է ժողովրդին:

Գեղարվեստական ստեղծագործությունը հեղինակային ստեղծագործություն է:

Եթե գեղարվեստական ստեղծագործությունն ապրում է ընթերցողից անկախ, ապա բանահյուսությունը այնքան է ապրում, որքան հիշում են այն:

Բանահյուսական նյութը ստեղծվում է, եթե պահանջ կա: Միջավայրը պահանջ ունի, որ ստեղծվեն անեկդոտներ:

Բանահյուսական նյութը ունի տարբերակներ: Գեղարվեստական գրականությունը նույնպես կարող է տարբերակներ ունենալ, բայց դրանք պատկանում են հեղինակին:

ԳԼՈՒԽ 2. ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԵՐԸ

2.1. ՀՄԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՂՈԹՔՆԵՐ

Հայ ժողովրդական բանահյուսության ամենանախնական տեսակները հմայություններն ու աղոթքներն են, որոնք բնության և հասարակական չար ուժերի դեմ մղած պայքարի արտահայտությունն են, չարխափան խոսքեր են, օգնության կանչեր, մարդու՝ խոսքի ամենազոր ուժի նկատմամբ ունեցած մեծ հավատի արտահայտությունն են:

Հմայություններն ու աղոթքները իրենց բովանդակությամբ բազմազան են: Մեծ թիվ են կազմում բուժական աղոթքները՝ ուղղված հիվանդություններ բերողների՝ չար ոգիների, չար աչքերի, չարքերի, գայլերի, օձ ու կարիճների և այլնի դեմ: Հմայությունների մի ստվար խմբի թեման մարդու հոգեկան և բարոյական աշխարհն է, դրանց նպատակն է բարձրացնել մարդու ոգու կորովը, դարձնել նրան անվախ, ջերմացնել նորապսակների սերը և այլն: Կան թշնամուց և անօրեն մարդուց ազատվելու, անվնաս մնալու աղոթքներ, աշխատանքային աղոթքներ: Հողագործն ու շինականը չէր սկսում իր աշխատանքը մինչև չասեր չարքերին հալածող աղոթքը:

Աչքըտվածի աղօթք

Նստել ես սև սարին, ապառաժ լեռ քարի:Սև օձը կթեցի, մածօն արի, ով կերավ, ճաքեց, ով տեսավ, զարմացավ: Չար մարթը, չար աչքը, չար նեաթը առնու ջուրը, վէր խորտակվի:

Աղօթք թշնամու դեմ

Աստուածամար, ահ արա, անօրէն մարդուն մահ արա, լեզուն բերանը բուրդ արա, թաթը կրունկին տեղն արա:

2.2. ԱՌԱՍՊԵԼՆԵՐ ԵՎ ՎԻՊԵՐԳԵՐ

Քերթողահայր Խորենացու «Հայոց պատմություն»-ից իմանում ենք, որ նրա ապրած ժամանակներում՝ 5-րդ դարում, լայն տարածված են եղել հնագույն և հին ժամանակներից եկած բանահյուսական տարբեր ժանրերի ստեղծագործություններ: Նա հիշատակում է «զրոյցս նախնականս», «երգ վիպասանցը», «թվելյաց երգերը», «երգ բանիցն», «երգ առասպելացը», «ցցուց և պարուց երգեր» և այլն: Դրանցից Խորենացու միջոցով մեզ են հասել առասպելական և պատմական-վիպական մի քանի երգեր:

Առասպելը ավանդություն է անհավանական, տարօրինակ, անբնական երևույթների մասին, որոնք ընկալվում են որպես ճշմարտություն: Մարդը առասպելի միջոցով փորձել է պատասխանել ինչու և ինչպես հարցերին: Առասպելում տեսնում ենք կյանքի առարկայական ընկալումը: Բնությունը մարդու համար նույնպես շնչավոր էր, որին վերագրում էր իր հատկանիշները: Խորենացին առասպելը համարել է սուտ պատմություն, բայց չի ժխտում նրա պատմությունը, այն համարել է այլաբանություն, որի հիմքում ընկած է ճշմարտությունը: Խորենացու նպատակն է գտնել այլաբանության մեջ թաքնված ճշմարտությունը, իմաստ տա անիմաստությանը, անզարդը զարդարի:

Առասպելներում արտացոլվել են ժողովրդի կյանքի կարևոր դեպքերը՝ ստանալով հիպերբոլիկ և գերբնական տեսք:

Առասպելները զրույցներ են բնության ուժերը մարմնավորող աստվածների մասին, վիպերգերի նյութը ժողովրդական պատմությունն է:

Առասպելները ավելի վաղ են ստեղծվել, քան վիպերգերը:

Վիպերգերը ներկայացնում են հայ ժողովրդին, նրա պետականության կազմավորումը: Վիպերգերի հիմնական ուղղվածությունը հայրենասիրությունն է, ազատասիրությունը:

Տարածված ու հայտնի առասպելներն են «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Վահագն Վիշապաքաղ», «Տորք Անգեղ»: Իսկ վիպերգերն են «Հայկ և Բել», «Հայկյան Արամ», «Արտաշես և Արտավազդ» և այլն:

Հայկ նահապետ – հայերի անվանադիր նախնին է (քանդակագործ՝ Կարլեն Նուրիջանյան):

Վահագնի ծնունդը

Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ.

Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր,
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ.

Նա հուր հեր ունէր,
Բոց ունէր մօրուս,
Եւ աչքունքն էին արեգակունք:

Վահագն վիշապաքաղ (քանդակագործ՝ Կարլեն Նուրիջանյան):

2.3. ՀԵՔԻԱԹՆԵՐ

Հայ բանահյուսության ամենահին, տարածված և սիրված ժանրերից է հեքիաթը: Հեքիաթներից մեզ են հասել մարդկանց պատկերացումները բնության ու կենդանական աշխարհի մասին, տիեզերական ուժերի և հասարակական կյանքի՝ մարդուն անհասկանալի ուժերի մասին:

Հեքիաթները լինում են երեք տեսակի՝ կենդանական, հրաշապատում և իրապատում:

Կենդանական հեքիաթներ: Այս հեքիաթներում մարդիկ ոչ միայն արտահայտել են իրենց պատկերացումները կենդանիների մասին, այլև այլաբանորեն ակնարկել են մարդկային այս կամ այն հատկանիշները:

Հրաշապատում (կախարդական) հեքիաթներ: Ավելի խոր ընդհանրացումներ են պարունակում այս հեքիաթները, որոնք պատմում են չարի և բարու պայքարի, դրական հերոսի հրաշապատում արկածների, փորձությունների և հաղթանակի մասին: Բոլոր հեքիաթները ավարտվում են չարի դեմ բարու հաղթանակով: Նրանցում արտահայտվել է այն, ինչ ստեղծվել է մարդկանց երևակայության մեջ: Յուրովի է ընկալվում ժամանակն ու տարածությունը: Ժամանակը չունի արգելք, տարածություն՝ նույնպես. Երկուսն էլ անսահման են:

Բոլոր հեքիաթներին բնորոշ է նույն սկիզբը՝ «Լինում է, չի լինում», «Կար, չկար», «Ժուկով-ժամանակով»:

Հրաշապատում հեքիաթների հիմքում ընկած են կայուն, թվով սահմանափակ դիպաշարեր, որոնք գոյություն ունեն կոնկրետ հեքիաթից անկախ: Հրաշապատում հեքիաթները չունեն հայրենիք: Հեքիաթին ազգային երանգ է հաղորդում ասացողը:

Իրապատում հեքիաթներ: Այստեղ կյանքը, մարդիկ, մարդկային հարաբերությունները արտացելվում են առավել իրական գույներով: Երևակայական հնարքները բացակայում են, գործողությունները արագ են զարգանում, մեծ տեղ է գրավում երգիծանքը:

Հեքիաթներին հատուկ լավատեսությունը, չարի նկատմամբ բարու հաղթանակի հավատը իրապատում հեքիաթներում ավելի են խորանում:

Հայ ժողովրդական հեքիաթները չեն կորցրել իրենց գեղարվեստական, ճանաչողական, դաստիարակչական նշանակությունը: Նրանք առատ և անսպառ նյութ են գիտության բոլոր բնագավառների մասնագետների համար:

Հակոբ Կոջոյան - «Անմահական խնձոր» Մարտիրոս Սարյան «Հազարան բլբուլ»



2.4. ԱՌԱԿՆԵՐ

Առակը վաղ շրջանում կենդանական հեքիաթի տեսակներից մեկն էր, բայց ավելի սեղմ դիպաշարով և այլաբանական բովանդակությամբ: Առակների մեծագույն մասում հանդես են գալիս կենդանիները, թռչունները, երկնային մարմինները, բույսերը, բայց միշտ նկատի ունեն մարդուն և մարդկային հարաբերությունները: Առակներում ժողովուրդը պարսավում, ծաղրում, դատապարում է նրանց, ովքեր աղվեսային խորամանկությամբ ու քծնանքով, գայլային ագահությամբ ու դաժանությամբ, էշի համառությամբ ու բթությամբ թշնամի են մարդուն, խանգարում են նրա ստեղծագործ աշխատանքին:

Առակները բաղկացած են բուն տեքստից և բարոյախոսությունից: Առակների մեծ մասը ունի բարոյախոսություն, որն սկսվում է «Առակս զինչ ցուցանե» արտահայտությամբ: Այն բխում է դեպքերի նկարագրությունից:

Աղվեսը և կաքավը

Աղվիս զկաքավ պռնից: Կաքավ ըսաց. «Աղվի՛ս, ի՞նչ տ՚էնիս»: Ըսաց՝ քի տը ուտիմ: Ըսաց. «Փառք տու աստուն, նոր զի կի»:

Ինչ փառք իտու աստուն, կաքավ բերնեն թռավ:

Աղվիս դարձավ ըսաց. «Էնու տուն ավիր ըլի, ինչ չուր կուշտ չուտը, փառք տա աստուն»

«Ազվեսն ու ագռավը»

«Մկների ժողովը»

«Առյուծն ու աղվեսը»

2.5. ԴՅՈՒՑԱԶՆԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Բանահյուսական ժանրերից ամենամեծը իր ընդգրկումով, ծավալով ու նշանակությամբ դյուցազներգությունն է, որը ժողովրդի հավաքական հանճարի ամենացայտուն արտահայտությունն է, մարմնավորում է նրա պատմության հերոսական էջերը, նրա պայքարն ու երազանքները, ազատությունն ու արդարության ձգտումը:

Հայ ժողովրդկան դյուցազներգությունը՝ «Սասնա ծռեր»-ը, ստեղծվել է 8-10-դդ ժողովրդի պատմական ճակատագրի հանգուցային փուլում և իր մեջ կրում է պատմական եղելությունների արձագանքը:

«Սասնա ծռեր»-ը մեզ է հասել ասացողների շնորհիվ: Առաջին ասացեղը Մշո դաշտի Առնիստ գյուղից Կրպոն է, որից 1873թ-ին գրի է առել բանահավաք Գ. Սրվանձտյանը և 1874թ-ին հրատարակել իր «Գրոց ու բրոց» ժողովածուի մեջ:

Դյուցազներգությունը արտացոլում է արաբական տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած պատերազմը: Ժողովուրդը հանդես է գալիս իբրև մեկ միասնություն, որը պայքարի է ելել մեծ նպատակների համար: Իր լավագույն գծերը, ձգտումները ո իղձերը

ժողովուրդը մարմնավերում է գլխավոր հերոսների մեջ, որոնք ներկայանում են և՛ իբրև անհատ, և՛ իբրև ժողովրդի ուժի ու իմաստության հավաքական մարմնացում: «Ժողովուրդը ոչ մի բանի մեջ էնքան պարզ ու պայծառ չի երևում, որքան ազգային էպոսի մեջ»,- գրել է Հ. Թումանյանը:

Էպոսում պատկերված են ժողովրդի ծանր կյանքը և զավթիչների դեմ մղած ազատագրական կռիվները: Հերոսները սերնդից սերունդ պատերազմում են, բայց ոչ ի սեր պատերազմի, ժողովուրդներին նվաճելու և ստրկացնելու, այլ ի սեր ազատության, ի սեր բաղձալի խաղաղության: Նրանք ազատության և խաղաղության հերոսամարտիկներ են, որոնք խաղաղություն են պահանջում ոչ միայն ստեղծագործ, խաղաղ աշխատանքի ժամանկ, այլև ստիպված պատերազմելու և ամբարտավան թշնամուն ջախջախելուց հետո:

Դավթի խաղաղասիրական խոսքերը դրա ապացույցն են:

Ելեք գացեք ու ձեր տներ նստեք,
Հանդարտ կացեք,
Մեկ էլ չելնեք ու գաք վեր Սասնա:
Մեկ էլ որ զենք առնեք մեր դեմ,
Քառասուն գազ խոր հորում լինեք,
Թե ջաղացի ջոջ քարի տակ,
Տը ելնի ձեր դեմ Սասնա Դավիթ,
Տը ելնի ձեր դեմ Թուր Կեծակին:

Խաղաղասիրությունը հիմնված է ժողովրդի անխորտակելի հզոր ուժի վրա: Խաղաղություն են պահանջում հզոր, քաջ, անպարտելի, հերոսական ժողովուրդները, որոնք հարգում են ուրիշ ժողովուրդների ինքնությունը, սիրում են կյանքը ու խաղաղ ստեղծագործ աշխատանքը: «Աշխարհը գութնի մոտ կլիանա» հերոսների դավանած սկզբունքը դրա լավագույն ապացույցն է:

Ժողովուրդը սիրում է աշխատանքը, մայր հողը և պատրաստ է պաշտպանել դրանք, ուստի մի ձեռքով կառուցել է, մյուսով՝ պաշտպանել այն:

Դյուցազներգությունում երևում են նաև հայ ժողովրդի հարգանքն ու սերը ուրիշ ժողովուրդների նկատմամբ: Նա բարեկամության ու եղբայրության ջատագովն է, քանի որ

հարգում է ուրշի ազատությունը: Դյուցազներգությունը սիրվել է ժողովրդի կողմից, բազում դարեր համախմբել է մարդկանց զգացմունքները, միտքն ու կամքը, ներշնչել է վստահություն սեփական ուժերի նկատմամբ, հավատ, որ չար ուժերը կպարտվեն, հույս, որ ապագան պայծառ է լինելու, սեր դեպի աշխատանքը ու խաղաղությունը:

2.6. ԱՌԱԾՆԵՐ ՈՒ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ

Առածներն ու ասացվածքները հայ ժողովրդական բանահյուսության մարգարիտներն են:

Առածները ողղակի կամ փոխաբերական իմաստ ունեցող կարճ, պատկերավոր ասույթներ են: Դրանք ժողովրդի պատմական զարգացման ընթացքի, դարավոր կենսափորձի նկատմամբ նրա ունեցած հայացքի խտացումներ են:

Առածներին մոտ են ասացվածքները, որոնք ուղղակի խոսքեր են և գրեթե միշտ գործածվում են առանց փոխաբերական իմաստի:

Առածները նման են հանելուկի: Առածի դեպքում երևույթը հաստատվում է, հանելուկի դեպքում առկա է հարցը: Առածը բացահայտում է տարբեր երևույթների միջև եղած կապը հակադրության միջոցով: Հակադրվում են լավն ու վատը, մեծն ու փոքրը, խելքն ու տգիտությունը: Տարբեր առածներ կարող են արտահայտել նույն միաստը.

Ինչ ցանես, այն կհնձես:

Ճտերն աշնանն են հաշվում:

Լավություն արա, ջուրը գցիր:

Առածները գործի հետևանքի մասին են:

Կառուցվածքով առածները կարող են նման լինել, իմաստով՝ ոչ:

Չկա կրակ առանց ծխի: - Չկա հետևանք առանց պատճառի

Չկա վարդ առանց փշի: - Անթերի առարկա չկա

Չկա գետ առանց ափերի: - Չկա ամբողջություն առանց մասի

Մեծ է առածների պատմաճանաչողական, դաստիարակչական, գեղագիտական նշանակությունը: Կան առածներ, որոնցում երևում է ժողովրդի ծանր վիճակը:

Ալին գնաց, Վալին եկավ: Դատի Խաչիկ, տանի տաճիկ:

Ժողովուրդը միշտ առաջնորդվել է «Չի եղել գիշեր, որ չի լուսացել» առածի սկզբունքով: Երբեք չի հուսալքվել, միշտ մնացել է լավատես: Հաճախ առակների եզրակացությունը ասվել է իբրև առած.

Ես աղա, դու աղա, բա մեր աղունն ո՞վ աղա: - Եկեղեցին և ջրաղացը առակի բարոյախոսությունն է:

Ինձնից ելե, ինձ լողալ կսովորեցնի: - Խեղդվող էշը:

Կան երկար բովանդակությամբ առածներ:

Էշին ասին. «Աչքդ լույս, քեզ քուռակ է ծնվել»: Ասաց. «Խոտը առաջես պիտի առնեն, ոչ թե բեռը՝ շալակես»:

Որոշ առածների նմանությունը ուրիշ ժողովուրդների առածների հետ բացատրվում է ոչ թե փոխառությամբ, այլ նմանատիպ կայնքով: Առածների մեծ մասը իրենց բնույթով և բովանդակությամբ խորապես ազգային են:

Ամեն բան վախտին մտիկ կանի, վախտը՝ ոչ մի բանին:

Ջուրը չտեսած՝ չեն բոբիկանա:

Վռազողի մերը տղա չի բերի:

Ծառն իր պտուղեն կճանաչվի:

2.7. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Հանելուկը դժվար լուծելի հարց է, որը հիմնականում տրվում է փոխաբերության ձևով: Այն առարկայի, երևույթի փոխաբերական պատկերումն է՝ հիմնված լուծելի առարկայի և հանելուկում նրան փոխարինող առարկայի հատկանիշների նմանության վրա:

Հանելուկները ունեն ճանաչողական, ուսուցողական և գեղարվեստական արժեք: Կան երկխոսությամբ կառուցված հանելուկներ, թվաբանական խնդիրներ, կատակային հանելուկներ: Հանելուկները տարածված են հեքիաթներում, վիճակի և հարսանեկան երգերում:

Հանելուկը լուծելու համար պահանջվում է խելք, սրամտություն: Դրանք բացահայտում են իրականության բազմաթիվ կողմերը , դառնում նրա ճանաչման կարևոր միջոցներից մեկը: Հանելուկները միշտ սկսվում են հարցով («Էն ի՞նչն ա, ի՞նչը», «Էն ի՞նչ ա որ»):

Էն ի՞նչն ա, ի՞նչ՝ կարմիր բուղեն

Գետնի տակին գոռում ա: (Գինու կարաս)

Էն ի՞նչն ա, ի՞նչ՝ ինքը մին, մեջը հազար: (Նուռ)

Տասնը հինգ տարի թագավոր էլավ,
Տասնը վեցին հիվանդացավ,
Երեսունին մեռավ պրծավ,
Համ էլ եդ սաղացավ: (Լուսին)

2.8. ՔՆԱՐԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.8.1. Աշխատանքային երգեր: Աշխատանքային երգերում փառաբանվում են աշխատանքը, շինականը, նրա հետ բանող անասունը, աշխատանքային գործիքները, աշխատանքի առանձին պահերը՝ վար, ցանք, ջրտուք, քաղհան, հունձ, կալ, այգեկութ, աղորիք և այլն: Դրանք ստեղծվում և կատարվում են միայն աշխատանքի ժամանակ: Կոմիտասը գրել է. «Ոչ մի գյուղացի, տանը նստած, կալի երգ չի ասի, որովհետև կալերգն ստեղծելու և ասելու տեղն է կալը»: Բայց աշխատանքի ժամանակ երգվում են երգեր, որոնք աշխատանքային չեն, օրինակ՝ սիրո երգեր, երգիծական երգեր:

Աշխատանքային երգերի հնագույն տեսակները տարբեր ձայնարկություններ և կանչեր են եղել, որոնցով մարդը թեթևացրել է աշխատանքը, ազդել չար ուժերի վրա: Աշխատանքային երգերի հիմնական բովանդակությունը երկրագործի տառապալից աշխատանքն է, նրա տրտունջը ու բողոքը: Ծանր է աշխատանքը, բայց, միաժամանակ, ազնվացնող է: Այդ երգերի մեջ կա հավատ, հույս, լավատեսություն:



Աշխատանքային երգերում երկրագործից հետո առաջնակարգ տեղ են գրավում լծկան անասունները (եզ, գոմեշ): Երկրագործը ջերմագին սիրով, հպարտությամբ է խոսում նրանց մասին՝ համարելով իր «դարդերի դարման», սրտակից ընկեր, հավատարիմ, անդավաճան բարեկամ: Իրենց հերթին անձնավորված անասունները երկրագործի հետ մտորում են, կիսում աշխատանքային դժվարությունները, տխրությունը, ուրախությունը, բողոքը, ընդվզումը: Կան երկրագործական

գործիքներին նվիրված երգեր: Գութանը մարմնավորում է գյուղը: Հայ շինականը գովաբանում է մյուս գործիքները ևս՝ երկանքը, սանդը, թեշին, ճախարակը:

2.8.2. Սիրո երգեր: Սիրո երգերը հայոց բանահյուսության անգին գոհարներ են: Սերը մարդուն ազնվացնող, վեհացնող, հերոսության մղող ուժն է: Սերը և կինը միաձույլ են: Նրանցից մեկի բացակայությունը խախտում է գեղեցիկ ներդաշնակությունը: Սերը երջանկության աղբյուր է, այն բերում է նաև վիշտ, ցավ, տառապանք: Սիրո երգերում առանձնահատուկ տեղ են գրավում կնոջ արտաքին բարեմասնությունների գովքը, կյանքը վայելելու ձգտումը, սիրով սիրո մեջ ապրելու երազանքը: Սերը և կինը կյանքը ջերմացնող արեգակ են.

Ես մի չոր ծառ էի, դու՝ գարնան արև,

Քո սիրով ծաղկեցավ իմ ճյուղն ու տերև:

Այնքան պարզություն, մաքրություն, անմիջականություն, նվրիվածություն, հավատարմություն, անձնազոհություն կա այս երգերի մեջ: Անարատ սերն է ընտանիքի հիմքը: Սիրո երգերի մեջ կան զանազան խորհրդանիշներ՝ խնձոր, նուռ, ծաղիկ, սպիտակ ձի, չինարի ծառ և այլն: Դրանք լի են հոգեզմայլ բացականչություններով՝ ջան, ջանե-ջան, վայ, հաբրբան…

2.8.3. Պանդխտության երգեր: Պանդխտության երգերը գեղարվեստական

կատարելության հասած երգեր են: Այս երգերը հայ ժողովրդի պատմական դժխեմ ճակատագրի արտացոլումն են, որտեղ իշխում են բաժանման ցավը, կարոտը, վերադարձի հույսը, հայրենի բնաշխարհի ձգողական ուժը: Պանդխտության երգերից ծորում է թախիծը, սրտակեղեք կարոտը: Տառապում են և՛ օտարության մեջ տանջվող պանդուխտը, և՛ հայրենիքում նրան անհույս սպասող հարազատները: Կարեկից սիրտ չգտնելով՝ պանդուխտը իր ցավը պատմում է կաքավին, սարերին, ձորերին, լուսնին,հանգուցյալ ծնողներին: Հիմնական խորհրդանիշներից է կռունկը:

2.8.4. Կենցաղային, ծիսական քնարերգություն

Հարսանեկան երգերը, օրորոցի երգերը, վիճակի, սգո երգերը ունեն կենցաղային, ծիսական բնույթ ու բովանդակություն: Շատ բաներ են մոռացվել, աղավաղվել, վերաիմաստավորվել: Դրանք բացահայտում են հայ հին կյանքը, կենցաղն ու սովորույթները:

Հարսանեկան երգեր: Ուրախ երգեր են: Գլխավոր դեմքը հարսն է՝ բոլորի հիացմունքի ու գովքի առարկան: Հարսը թագուհի է, նրա կողքին է թագավորը՝ փեսան: Նրանց գովքի հիմքում պտղաբերության, ընտանիքի և կյանքի հարատևության գաղափարն է: Այս երգերում հիշատակվում են հարսի և փեսայի ծնողները, հարազատները:

Թագվո՛ր, ի՞նչ բերեմ քեզ նման,
Քո կանաչ արև քեզ նման,
Շուշան ծաղիկ, որ կհոտեր,
Անուշ բուրեր քո թագուհին:

2.8.5. Օրորոցի երգեր: Հարսանեկան երգերի տրամաբանական շարունակությունն է օրորոցի երգը, երբ ճյուղավորվում և պտուղ է տալիս հարսանեկան կենաց ծառը: Այս երգերը իր երեխային անսահման սիրող մոր երգեր են: Նա գովերգում է իր բալիկին, նրանով լցված տեսնում բնությունն ու աշխարհը, միշտ պայծառ է տեսնում նրա ապագան:

Վարդեր քաղեմ, փունջ անեմ,
Օրորոցիդ շուրջ անեմ.
Վարդենին թող հոտ անի,

Քո անուշիկ քնիկ տանի:

2.8.6. Վիճակի երգեր: Դրանք կոչվում են նաև «ջանգյուլումներ» (ծաղկի երգեր): Սերտորեն կապված են գարնան զարդոնքի հետ, բնության զարդարվելու հետ: Համբարձման տոնին սափորի միջից վիճակ են հանում՝ կանխորոշելով բախտը: Վիճակի երգերում արտացոլվում են երիտասարդների մտորումները ու խոհերը, ցանկություններն ու ակնկալություններն: երգերի գերիշխող տոնը լավատեսությունն է, կենսասիրությունը, երիտասարդ տղաներին ուղղված զվարթ հումորը:

Ես ունեմ կարմիր խնձոր,
Կարմիր խնձորն ի անմահական,
Քանի վեր կթալեմ,վեր-վեր կխաղա,
Էն էլ քո սիրո նշան ա:
Ջան, ջան, վիճակ ջան,
Ազաբ լաճեր քեզ կուրբան:

2.8.7. Սգո երգեր: Կոչվում են նաև մահերգեր, եղերերգեր, ողբերգեր: Կատարել են ողբասաց կանայք: Իրենց սրտառուչ երգերով սփոփել են ննջեցյալի տիրոջը, թեթևացրել նրա վիշտն ու մորմոքը: Սգո երգերը հուզական են ու թախծոտ:

Հայ ժողովրդական կենցաղային, ծիսական քնարերգությունը հավատալիքների, կրոնական պատկերացումների, բարքերի, սովորությունների, կենցաղի և հոգեբանության ուսումնասիրության համար կարևոր աղբյուր է:

2.9. ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ

Բնության երգերը հայ ժողավրդական քնարերգության հարուստ տեսակներից են, ունեն ճանաչողական արժեք: Անհրաժեշտ գաղափար են տալիս բուսականության, կենդանիների, թռչունների մասին: Հայ գեղջուկը, չնայած իր ծանր, տանջալի կյանքին, անտարբեր չէ բնության գեղեցկությունների նկատմամբ: Այս երգերում երևում են



ժողովրդի լավատեսությունը, հավատը: Ինչպես բնության մեջ ձմռանը հաջորդում է գարունը, այնպես էլ տխրությանը կհաջորդի ուրախությունը, տառապանքին՝ բերկրանքը:

2.10. ԿԱՏԱԿԵՐԳԵՐ և ԵՐԳԻԾԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Այս երգերում կատակով ու երգիծանքով քննադատում են հասարակական կյանքի արատները, կենցաղային ու մարդկային թերությունները: Եթե թերությունը, արատը ընդհանուր մարդկային բնավորություն ունի, երգիչները կատակում են, ձգտում հասնել ցանկալիին, կատարյալին: Դրանք ունեն դաստիարակչական նպատակ: Ժողովուրդը ծիծաղում է հիմարների, պարծենկոտների, եսասերների, վախկոտների, նախանձների վրա: Երգիծական երգերում դատապարտվում են այնպիսիս երևույթներ, որոնք վնասում են հասարակությանը:

2.11. ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

Բանահյուսության կենսունակ ժանրին են պատկանում անեկդոտները: Անեկդոտներում սեղմ ու լակոնիկ ձևով պատմում են միայն մի միջադեպ: Նրանց հիմնական բովանդակությունը կենցաղային, սոցիալական, քաղաքական երգիծանքն է: Ծաղրվում են հարբեցողությունը, անբարոյականությունը, տգիտությունը, ծուլությունը, ժլատությունը, ագահությունը և այլ արատներ:

Անեկդոտներն աչքի են ընկնում լեզվի պարզությամբ ու պատկերավորությամբ, երկխոսությունների սրամտությամբ, անակնկալ ու սրամիտ ավարտով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բանահյուսությունը ժողովրդի ստեղծած ազգագրական հարուստ ժառանգությունն է: Այն խորապես ազգային է, ազգային ինքնության նախահիմքն է: Այստեղ է երևում ժողովրդի ազգագրական յուրահատկությունը: Հայոց բանահյուսության գլխավոր ուղղվածությունը հայրենասիրությունն է: Բանահյուսությունը ունի ճանաչողական, գեղագիտական, ուսուցողական մեծ նշանակություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, Երևան, 1944
2. Աբեղյան Մ., Հայ ժողովրդական առասպելներ, Երևան, 1945
3. Բրիգորյան Գ., Հայ բանահյուսություն, Երևան, 1974
4. Գրիգորյան Ռ., Հայ ժողովրդական օրորոցի և մանկական երգեր, Երևան, 1970
5. Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, երևան, 1960
6. Հարությունյան Ս., Հայ հին վիպաշխարհ, Ե 1987
7. Ջրբաշյան Է., Գրականության տեսություն, Ե 1980
8. Ջուհարյան Թ., Հայ գրականության մեթոդիկա, Ե 1980
9. Սասունցի Դավիթ, Երևան, 1980
10. Համացանց